

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ 1918–1920 Թ.Թ.»

Գիտաժողով – քննարկում Հայաստանի Ամերիկյան  
համալսարանում (31 մայիսի – 1 հունիսի, 2018 թ.)\*

**Բանալի բառեր** – գիտաժողով-քննարկում, պատմության դասեր, համաշխարհային պատմություն, գիտական քննարկումներ, հարց-պատասխան, պատմական համատեքստ:

«ՎԷՄ» համահայկական հանդեսի խմբագրության նախաձեռնությամբ 2018 թվականի մայիսի 31-ին և հունիսի 1-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանի Փարամագ Ավետիսյան մասնաշենքի Ալեք և Մարի Մանուկյան սրահում տեղի ունեցավ գիտաժողով-քննարկում՝ «Հայաստանի Հանրապետության պատմության դասերը 1918–1920 թթ.: Սերունդների հիշողության և արդիականության մարտահրավերների համատեքստում» խորագրով, որը նվիրված էր Հայաստանի Հանրապետության 100-ամյակին:

Միջոցառումն ընթացավ հումանիտար գիտությունների տարբեր բնագավառները ներկայացնող շուրջ 25 զեկուցաբերների ելույթներն ընդմիջած լուրջ քննարկումների ու կարծիքների փոխանակման մթնոլորտում: Գիտական դիսկուրսի արդյունավետությանը նպաստում էր նաև այն հանգամանքը, որ զեկուցաբերների գերակշռող մեծամասնությունը ներկայացնում էր գիտության արդի պահանջներով առաջնորդվող հայաստանյան գիտնականների նոր սերունդը:

Մայիսի 31-ին՝ ժամը 10.00-ին սկսված գիտաժողով-քննարկման կազմկոմիտեի անունից բացման խոսքով հանդես եկավ «ՎԷՄ» հանդեսի խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր **Գևորգ Ս. Խուդիսյանը**: Իր համառոտ ելույթում նա ցույց տվեց գիտաժողով-քննարկման էական, բովանդակային տարբերությունը ՀՀ 100-ամյակի առիթով կազմակերպված նախորդ միջոցառումներից: Դրանք են՝ հումանիտար գիտությունների տեսական ու մեթոդաբանական նոր ձեռքբերումները մեր իմացական տարածք ներբերելու, Հայոց պետականության պատմությունը համաշխարհային պատմության համատեքստում ներկայացնելու իրողությունները, և վերջապես՝ 1918–1920 թթ. իրադարձությունների քննությունը՝ արդի եվրոպական պատմագիտությամբ:

Ժ (ԺԶ) փայրի, թիվ 2 (62), ապրիլ-հունիս, 2018  
ՎԷՄ համահայկական հանդես

\* Ընդունվել է տպագրության 05.07.2018:

յան մեջ լայնորեն կիրառվող հիշողության խնդրակարգի հիման վրա:

Գիտաժողով-քննարկման մասնակիցներին ուղղված **Ն. Ս. Օ. Տ. Տ. Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի** օրհնության խոսքը ներկայացրեց Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի արտաքին հարաբերությունների և արարողակարգի բաժնի տնօրեն **Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը**: Հայաստանի Հանրապետության ՀՀ 100-ամյակի և Մայիսյան հերոսամարտերի մասին Վեհափառ Հայրապետի խոսքում հատկապես շեշտվում էր այն գաղափարը, որ մեր ազգի հաղթանակների գաղտնիքը ազգային միասնությունն է, ազգային միասնություն՝ բոլոր ոլորտների մեջ: Սակայն միասնությունը գաղափարների նույնացումը չէ, չի նշանակում, թե բոլորը նույնը պիտի լինեն, նույն կերպ մտածեն:

ՀՅ Դաշնակցության Բյուրոյի անունից գիտաժողովի մասնակիցներին ուղղված ողջույնի խոսքով հանդես եկած ՀՅԴ Բյուրոյի անդամ **Կիրո Մանոյանը** հատկապես կարևորեց այն փաստը, որ 1918 թվականին ձևավորված Հայոց պետականությունն այն հենման կետն է, որի շուրջ մեր ժողովուրդը մինչ օրս շարունակում է իր գոյատևումը:

Գիտաժողով-քննարկման առաջին նիստը, որը կրում էր «**ՀՀ հիմնադիրների պատմական առաքելությունը**» վերտառությունը, վարում էր նշանավոր պատմագետ, պրոֆեսոր **Ալբերտ Ա. Ստեփանյանը**: Նա իր ներածական խոսքում նկատեց, որ ներկա ձգնաժամի պայմաններում մենք ազգովին կանգնել ենք նորից ինքներս մեզ քննելու, իմանալու, հայելու խնդրի առաջ: Դա թույլ կտա կրկին համոզվել, որ թեև մենք մեր նախնիների հետ նույնական չենք, բայց նրանց հետ մեզ կապում է ազգային հիշողությունը, ուստի թե ինչպես անցյալը կրերվի ներկա՝ կախված է մեր մտքի որակից, մեր որակից:

Գիտաժողովի առաջին զեկույցը՝ «**Հանրապետության գաղափարն ու հանրապետականությունը Հայոց նոր և նորագույն պատմության մեջ**», որով հանդես եկավ «ՎԷՄ» հանդեսի խմբագիր, պ. գ. դ. Գ. Խուդինյանը, նպատակ ուներ հստակեցնել գիտական դիսկուրսի հայեցակարգային հիմքերն ու նրանում գործածվող առանցքային հասկացությունները: Դրա համար հեղինակը մեկ առ մեկ ցույց տվեց հայ իրականության մեջ հանրապետության գաղափարի ձևավորման և քաղաքական նպատակի վերածվելու ընթացքը: Զեկույցաբերի կարծիքով՝ հանրապետության գաղափարն ու հանրապետականությունը հայ իրականություն են մուտք գործել ոչ թե անգլոսաքսոնական, այլ ֆրանսիական քաղաքական ավանդույթի ազդեցությամբ, ուստիև այդ հասկացություններն իրենց վրա կրում են ֆրանսերենի լեզվամտածողության ակնհայտ կնիքը:

Այնուհետև զեկույցաբերն անցավ 20-րդ դարի Հայոց պատմության հոլովույթում «հանրապետություն» և «հանրապետականություն» հասկացությունների կոնկրետ դրսևորումներին, ցույց տվեց դրանցով մարմնավորվող քաղաքական արժեքների սկզբունքային տարբերությունը՝ ներկա Հայաստանի քաղաքական կյանքում որոշակի կուսակցությանը՝ ՀՀԿ-ին վերագրվող նույն բնորոշումներից: Կոնկրետ փաստերով բացահայտեցին մեզանում նման խառնաշփոթի ի հայտ գալու պատճառները:

Դրանից հետո մեջբերելով «հանրապետություն» հասկացության մասին

իրավագիտության դասականների սահմանումները, զեկուցաբերը փաստարկված ձևով մերժեց 20-րդ դարի ընթացքում հայ ժողովրդի ստեղծած երեք պետություններն իբրև երեք հանրապետություններ ներկայացնող կեղծ-գիտական հայեցակարգը: Հեղինակը հիմնավորեց այն տեսակետը, որ այս հարցի հետ կապված 1991 թվականից հետո մեզանում ձևավորվել են երկու զուգահեռ ինտելեկտուալ միջավայրեր: Որովհետև 20-րդ դարի ընթացքում մեր քաղաքական ու քաղաքակրթական ավանդույթի մեջ արձանագրվել է կրկնակի խզում՝ խորհրդայնացումից հետո մենք հեռացել ենք նրանից, իսկ 1991 թվականից հետո՝ լիովին չենք հաղթահարել խորհրդային ավանդույթն ու վերադարձել մեր ակունքներին: Ուստի՝ «Հայաստանի Հանրապետություն» հասկացությունը միակ բնորոշումն է, որն արտացոլում է մեր անցյալի և ներկայի անխզելի միասնությունը:

Մեր երկրի խորհրդայնացումից հետո՝ մինչև 1936 թվականը, պահպանվել էր ՀՀ պաշտոնական անվանումի առաջին՝ «Հայաստան» բառը, բայց ահա հանրապետությունն իսպառ դադարել էր գոյություն ունենալուց: Քանզի «հանրապետություն» հասկացության գիտական սահմանումը ենթադրում է երկրի սուվերենություն և քաղաքացու կողմից իր իշխանությունն իրացնելու իրավունք: Զեկուցաբերի կարծիքով՝ հանրապետության գաղափարն ու հանրապետականությունը որևէ կապ չունեն ասիական բռնապետությունների արժեհամակարգից սնված խորհրդային ավանդույթի հետ: Ուստի՝ 20-րդ դարի ընթացքում մենք ունեցել ենք **երեք պետություն**, բայց **երկու հանրապետություն**, որոնցից երկրորդը ստեղծվել է միայն 1991 թվականին, բայց դրանից հետո էլ մեզանում երկու զուգահեռ ինտելեկտուալ միջավայրերի առկայությունը թույլ չի տալիս վերադառնալ մեր սեփական քաղաքակրթական ավանդույթին:

Դոկտոր **Ռուբինա Բ. Փիրումյանի** (ԱՄՆ) զեկուցման թեմայի վերնագիրն էր՝ «1918-ի և 1991-ի անկախութեանը ծնունդ տուող երկու ձակատագրական ժամանակաշրջաններ. համեմատական հայեացք»: Նոր ժամանակների Հայոց պատմության ու գրականության ճանաչված մասնագետի ելույթում պատշաճ կերպով բաղդատվեցին նշված զույգ դարաշրջանները: Հետաքրքիր էր Ռուբինա Փիրումյանի դիտարկումն այն մասին, որ 1918 թ. և 1991 թ. երկու անկախություններն էլ արդյունք էին երկու ամբողջատիրական և բռնապետական պետությունների՝ ցարական կայսրության և Խորհրդային Միության փլուզման: Իհարկե, մեկ էական տարբերությամբ՝ առաջին դեպքում աշխարհը պատերազմական դրության մեջ էր, իսկ երկրորդ պարագայում որոշ իմաստով՝ խաղաղ էր:

Լաջորդ զեկուցումը ներկայացվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի թանգարանների և արխիվի տնօրեն **Տ. Ատոլիկ քահանա Կարապետյանի** կողմից: Թեման հետևյալն էր՝ «Համայն հայության հոգևոր կենտրոնը 100-ամյա հեռավորության և բարձրության պատմական դիտակետից»: Ընդգծվեց, որ դարերի հոլովություն Հայաստանյայց եկեղեցին, որի մեջ անթեղված է հայկական պետականությունը, իր բացառիկ առաքելությամբ եղել է մի սրբազան պետականակերտ հաստատություն: Այս առիթով մեջ բերվեց Գևորգ Չորեքյան կաթողիկոսի միտքն այն մասին, որ մեր եկեղեցին միշտ զուրգուրել է հայոց պետականության գաղափարը, վշտացել նրա կորստ-

յան առթիվ, ուրախացել է հայոց պետական կյանքի վերակենդանացմամբ՝ Բագրատունյաց և Ռուբինյանց շրջաններում, որոնց անկումից հետո էլ դարեր շարունակ տենչացել է հայրենիքի քաղաքական վերածնությունը և գոհողություններ է արել այդ գաղափարի համար:

Հաջորդ զեկուցումը պ. գ. թ. **Արմեն Ս. Ասրյանին** էր, որի ելույթը խորագրված էր «Արամ Մանուկյանը որպես հայ ազգային-պետական գործչի մարմնավորում»: Ներկայացվեց Արամ Մանուկյանի քաղաքական ու որոշ չափով նաև՝ անձնական-անհատական դիմանկարի բավականաչափ խոր և համակողմանի պատկերը:

Պատմագիտության դոկտոր **Գևորգ Ս. Ստեփանյանը** «Ռոստոմի դերը Բաքվի հերոսամարտի կազմակերպման և ՀՀ անվտանգության ապահովման գործում» զեկուցումով ներկայացրեց ՀՅԴ հիմնադիրներից Ռոստոմի (Ստեփան Ջոռյան) 1918 թ. փետրվարին Պետրոգրադից Բաքու մեկնելու և մարտի սկզբներին տեղի հասարակական-քաղաքական կյանքին ներգրավվելու պատմությունը: Ուղղորդելով Բաքվի Հայոց ազգային խորհրդի և ՀՅԴ Բաքվի («Ոսկանապատի») կենտրոնական կոմիտեի աշխատանքները, Ռոստոմը դարձավ Անդրկովկաս արշավող թուրքական բանակի դեմ հայկական երկրորդ ճակատը բացելու գործի կազմակերպիչն ու առաջնորդը: Գ. Ստեփանյանը պատշաճորեն ներկայացրեց Ստեփան Ջոռյանի կայացրած հեռատեսական որոշումները: Հիշատակվեց, որ Արամ Մանուկյանը՝ Երևանում, իսկ Ռոստոմը՝ Բաքվում, արտաքուստ հակադրվելով իրար՝ ներքին համաձայնությամբ ձգտում էին կանխել թուրք-թաթարական քցցանի մեջ Հայաստանը խեղդելու օրավուր ահագնացող վտանգը: Դրա համար նրանց միջև գոյություն ունեւ որոշակի դերաբաշխում Բաթումի պայմանագրով Բաքուն հայկական ուժերից դատարկելու վերաբերյալ Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը խափանելու հարցում: Երևանում գտնվող և Բաթումի պայմանագիրը առերևույթ հարգող Արամը ու Բաքվում գտնվող, և այնտեղից հայկական ուժերի դուրսբերման՝ Բաթումի պայմանագրով նախատեսվող պարտավորության կատարմանը խոչընդոտող Ռոստոմը ձևով հակադրվելով իրար՝ իրականում նույն խաղն էին առաջ տանում: Նրանք գիտակցում էին՝ որքան ձգձգվի Բաքվի դիմադրությունը, այնքան կհետաձգվի Երևանի վրա թուրքական բանակի գրոհը:

Առաջին նիստի վերջին զեկուցումը՝ «Սպարապետ Դրաստամատ Կանայանի դերակատարությունը ՀՀ սահմանների պաշտպանության գործում 1918–1920 թթ.» ընթերցեց պ. գ. դ. **Համլետ Մ. Գևորգյանը**: Զեկուցման ձևաչափի թույլ տված ժամանակային սահմաններում ներկայացվեց Դրոյի բացառիկ կարևոր դերակատարությունը ինչպես հանրապետության ձևավորման, այնպես էլ պաշտպանության գործում՝ նրա կերպարը դնելով Արամ Մանուկյանի ու Ռոստոմի նման մեծությունների կողքին:

Գիտաժողով-քննարկման երկրորդ նիստը կրում էր «**Ժողովրդավարական պետության հայկական բնորոշը**» խորագիրը: Նրանում նախագահում էր դոկտոր Ռուբինա Բ. Փիրումյանը: «Հայաստանի անկախացումը և ՀՀ պետական մարմինների ձևավորման գործընթացը 1918 թ. մայիս-օգոստոս» թեմայով իր զեկուցումը ներկայացրեց պ. գ. թ. **Համո Գ. Սուքիասյանը**: Զեկուցաբերը մանրամասնորեն վերլուծեց Հայաստանի անկախացման ըն-

թացքը, մասնավորապես հանգամանալից քննության ենթարկեց 1918 թ. մայիսի 26-ին վրացական կողմի նախաձեռնությամբ Անդրկովկասյան սեյմի լուծարման փաստը: Նրա կարծիքով՝ իրական հիմքեր չունի հանրային ու մասնագիտական որոշ շրջանակների այն պնդումը, որ հայության համար նման լուծարումն անակնկալ էր, և հայ գործիչները հենց մայիսի 26-ին են իմացել դրա մասին: Համո Սուքիասյանը պնդումը բխում է գիտաժողովում ներկայացված որոշակի փաստաթղթային տվյալներից:

Պատմական գիտությունների դոկտոր **Արարատ Մ. Հակոբյանի** զեկույցը նվիրված էր ՀՀ կառավարության 1918–1920 թթ. գործունեության առանձնահատկությունների բացահայտմանը: Հեղինակը հիշեցրեց, որ Հայաստանի երկրորդ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը Հայոց պետականության 1918–1920 թթ. պատմության մեջ առանձնացրել է երեք փուլ: Առաջինը պետության կազմակերպման վաղ ժամանակաշրջանն է, որը կապվում է Հ. Քաջազունու գործունեության հետ, երկրորդ փուլը քաղաքացիական ստեղծագործ աշխատանքների ժամանակաշրջանը, որ համընկնում է իր ղեկավարման շրջանին՝ 1919 թ. ապրիլից մինչև 1920 թ. մայիսի 5-ը, երրորդ շրջանը՝ Համո Օհանջանյանի վարչապետության և Սիմոն Վրացյանի կառավարության 10 օրերը նա համարել է արտաքին ու ներքին թշնամիների դեմ պայքարի ժամանակաշրջան, որը հանգեցրեց հանրապետության անկմանը: Ա. Հակոբյանը ներկայացրեց ՀՀ հաջորդական կառավարությունների գործունեությունը՝ հիմք ընդունելով Ա. Խատիսյանի առաջարկած մոտեցումը:

Պատմական գիտությունների թեկնածու **Աննա Է. Ասատրյանի** զեկույցումը՝ «ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման սկզբունքները և գործառույթները 1918–1920 թթ. և մեր օրերում. համեմատական քննություն» ՀՀ նախկին և ներկա տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության լիարժեք համեմատություն էր: Ա. Ասատրյանն իր ելույթում բերեց փաստական հարուստ տվյալներ, որոնց հիման վրա վեր հանեց ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքային ու գործառույթային տարբերությունները և ընդհանրությունները՝ անցյալում ու մեր օրերում:

Պ. գ. դ. **Վանիկ Հ. Վիրաբյանը** խոսեց «Ռազմաքաղաքական մոտեցումները ՀՀ բանակի կազմակերպման գործում 1918–1920 թթ.» թեմայով: Նա նշեց, որ Հայաստանի Հանրապետության բանակը ստեղծվեց չափազանց դժվարին սոցիալ-քաղաքական իրավիճակում: Ուստի այսօր հարկավոր է անընդհատ վերադառնալ անցյալ և փորձել հասկանալ, թե այդ թվականների բանակը՝ որպես անվտանգության բաղկացուցիչ մաս, ինչ սայթաքումներ ունեցավ, և որոնք էին դրա պատճառները: Այնպիսի իրավիճակում, երբ պետությունը զրոյից էր ստեղծվում, անշուշտ, դժվար էր միանգամից մարտունակ բանակ ձևավորել: Այնուամենայնիվ, կարելի է ասել, որ սահմանափակ ռեսուրսներ ունեցող Հայաստանում առկա էր բավականաչափ քանակությամբ զորք, որը կարող էր երկիր պաշտպանել:

Մայիսի 31-ին կայացած գիտաժողով-քննարկման վերջին նիստը կրում էր «ՀՀ արտաքին քաղաքական կացության առանձնահատկությունները 1918–1920 թթ.» խորագիրը: Նրա սկզբում ներկայացվեց պատմական

գիտությունների դոկտոր **Աշոտ Ն. Հայրունու** «Հայաստանի Հանրապետությունը գերմանա-թուրքական հարաբերությունների համաձիքում՝ 1918 թ. հունիս-նոյեմբեր» ուշագրավ գեկուցումը: Իր գոյության առաջին ամիսներին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը գերմանական կառավարությանը պարբերաբար ներկայացնում էր տեղեկագրեր և խնդրագրեր, որոնց միջոցով ջանում էր ձեռք բերել Գերմանիայի աջակցությունը՝ Բաթումի պայմանագրի վերանայման, դրանում ամրագրված սահմանների ընդարձակման, ինչպես նաև Երևանում ու շրջակայքում կուտակված բազմահազար փախստականների դրության բարելավման համար: Քանի որ Գերմանիան մտադիր չէր ընդունել Կովկասում Թուրքիայի հավակնությունները, երկու կողմերն էլ վերջո ձեռք բերեցին պայմանավորվածություն այն մասին, որ Քառյակ միության բոլոր պետությունների մասնակցությամբ Կոստանդնուպոլսում հրավիրվի մի խորհրդաժողով՝ Կովկասին վերաբերող սահմանային ու մյուս բոլոր խնդիրները համատեղ վճռելու համար: Աշոտ Հայրունին ներկայացրեց Կոստանդնուպոլսում ՀՀ պատվիրակության կատարած մեծ ծավալի աշխատանքները՝ հիմնվելով գերմանական աղբյուրների վրա:

Պատմական գիտությունների թեկնածու **Էդիտա Գ. Գզոյանի** գեկուցման խորագիրն էր «Հայաստանի Հանրապետության միջազգային-իրավական կարգավիճակը՝ ըստ Ազգերի լիգայի ժնկյան արխիվի նորահայտ վավերագրերի»: Ելույթում ներկայացվեց ՀՀ 1918-1920 թթ. միջազգային-իրավական կարգավիճակը՝ Ազգերի լիգային անդամակցության համատեքստում: Կատարվեց համեմատական վերլուծություն Ռուսաստանյան կայսրության տարածքներում ստեղծված մյուս պետությունների՝ Ազգերի լիգային անդամակցության գործընթացի հետ: Ցույց տրվեց, որ լիարժեք անկախացման իրավունքի առումով Ազգերի լիգան բացառություն էր անում միայն երեք պետությունների՝ Լեհաստանի, Ֆինլանդիայի ու Հայաստանի համար, քանի որ նրանք ունեին նախկին կայսրության մեջ չմտնող տարածքներ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Աշոտ Ա. Մելքոնյանը** խոսեց «Ջավախքի հարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության օրակարգում 1918-1920 թթ.» թեմայով: Բանախոսը սկսեց ՀՅԴ կողմից առաջադրված Անդրկովկասի վարչատարածքային բաժանման խնդրի հիշատակումից, շարունակեց Անդրկովկասյան սեյմի գործունեության և ապա թուրքական բանակի արշավանքի շրջանում Ախալքալաքում տիրող իրավիճակի համակողմանի ներկայացմամբ: Հիշատակություն եղավ այն մասին, թե ինչպես Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունն արգելեց թուրքական յաթաղանից մագապործ Ախալքալաքի հայ գաղթականների անցումը դեպի Բորժոմ և Վրաստանի խորքերը՝ պատճառաբանելով վտանգավոր հիվանդությունների տարածումը կանխելու մտահոգությամբ:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, փ. գ. դ. **Ալեքսանդր Ս. Մանասյանը** ներկայացրեց «Արցախի իրավական կարգավիճակը 1918-1921 թթ.» ուշագրավ գեկուցումը: Դիտարկում արվեց այն մասին, որ դարաբաղյան հակամարտությունը մեզանում անընդհատ կապվում է 1988 թվականի հետ, այնինչ խնդիրը հարյուրամյակի պատմություն ունի: Բանախոսը ներկայացրեց հակամարտությանը վերաբերող իրավական այլևայլ նրբին իրողություն-

ներ: Բացահայտվեց 1918–1920 թթ. Ադրբեջանական Հանրապետության և Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական հանրապետության միջազգային լեգիտիմության բացակայության փաստը: Բանախոսն ընդգծեց, որ խնդրին առնչվող փաստաթղթերում բազմաթիվ են այդ իրողությունների կոնկրետ ապացույցները:

Գիտաժողովի առաջին օրվա աշխատանքներն ավարտվեցին **կլոր սեղանի** շուրջ քննարկվելիք թեմաների մասին կոնկրետ առաջարկություններ ներկայացնելով և դրանց հրատապությունն ու կարևորությունը հիմնավորելով:

Հունիսի 1-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանում իր աշխատանքները վերսկսած գիտաժողովի չորրորդ նիստում քննարկվեցին «**ՀՀ հասարակական-քաղաքական ու կրթամշակութային կյանքը 1918–1920 թթ.**» գիտաթեմայի մեջ մտնող հիմնահարցերը: Նիստը սկսվեց **Գեղամ Մ. Բաղայանի** «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական պատկերի փոփոխությունները 1918–1920 թթ.» ելույթով, որում հանգամանալից կերպով ներկայացվեցին ՀՀ-ում արձանագրված ժողովրդագրական տեղաշարժերին վերաբերվող տվյալները: Խոսվեց այն մասին, թե ինչ դժվարությունների հետ էր կապված արևմտահայ գաղթականների տեղավորումը՝ բնակության նոր վայրերում:

Նիստը շարունակվեց **Կարեն Պ. Հայրապետյանի** «ՀՅ Դաշնակցության պայքարը հատվածականության համախոսանիշի դեմ 1917–1920 թթ.» ուշագրավ զեկուցումով: Հեղինակն ընդգծեց, որ պատմության ընթացքում մենք հաղթանակների ենք հասել, երբ կարողացել ենք ապահովել մեր միասնականությունը, սակայն հազվադեպ է նշվում, թե միասնականություն ասվածի ներքո ինչ է հասկացվում: Հաշվի չի առնվում մի կարևոր հատկանիշ, որ բնորոշ է մեր ժողովրդին դեռևս 16-րդ դարի կեսերից սկսած, երբ նա արդեն բաժանված էր արևմտահայ և արևելահայ հատվածների: Այդ երևույթը առավել ցցուն կերպով դրսևորվեց հենց Հայաստանի Հանրապետության առաջին անկախության շրջանում: Հատվածականությունը մեր օրերում ևս պահպանվում է: Հայաստանցի-դարաբաղցի հասկացությունների տարբերակումը, ըստ էության, հատվածականության նոր կերպավորումն է:

Իր «Քաղաքական ընդդիմությունը Հայաստանի Հանրապետությունում 1918–1920 թթ.» զեկուցման մեջ պ. գ. դ. **Սուրեն Թ. Սարգսյանը** նախապես հստակեցրեց այն իրողությունը, որ չի կարելի շփոթել «հատվածականություն» և «քաղաքական ընդդիմություն» եզրույթները կամ հասկացությունները: Հանրապետության հաղթանակներին նպաստող հանգամանքներից էին նրանում առկա քաղաքական ընդդիմության հստակ գործունեությունը և դրա հանդեպ իշխող կուսակցության հանդուրժողականությունը: Խոսվեց իշխող կուսակցությունից (ՀՅԴ) հետո երկրորդ քաղաքական ուժի՝ Հայ ժողովրդական կուսակցության մասին:

Երիտասարդ պատմագետ **Նարեկ Ա. Մկրտչյանը** «ՀՀ մայրաքաղաք Երևանը որպես մշակութային հարացույց: Ալեքսանդր Թամանյանի նախնական ծրագիրը» ուշագրավ զեկուցման շրջանակներում ներկայացրեց ՀՀ տարածա-ձարտարապետական կազմակերպման խնդիրը՝ Ալեքսանդր Թամանյանի բեղմնավոր գործունեության հիման վրա: Զեկուցաբերի կար-

ծիքով դեռևս այդ շրջանում նախագծված Ալեքսանդր Թամանյանի Երևանը ներկայանում էր իբրև մտահոգևոր ճանապարհորդություն՝ հայկականից դեպի համաշխարհայինը և հակառակը: Ուստի Մեծ եղեռնից հետո սփյուռքայնացած ազգի համար Երևանը դառնալու էր ընդհանուր սևեռումի կետ: Այս իմաստային դաշտի վրա իշխելու էր Երևանի բնական հուշակոթողը՝ Արարատը:

Բանասիրական գիտությունների թեկնածու **Գավիթ Ս. Գյուրջինյանը** խոսեց «Հայոց լեզվի հանդեպ պետական վերաբերմունքի դրսևորումները Հայաստանի հանրապետությունում 1918–1920 թթ.» թեմայով: Ներկայացվեց, թե ինչպիսին էր լեզվական իրավիճակը նորանկախ հանրապետությունում: Հիշվեց, որ 1828-ից Ռուսաստանյան կայսրությանը միացված Արևելյան Հայաստանում պետական մարմինների, այդ թվում՝ դատարանի և բանակի լեզուն ռուսերենն էր: 1918–1920 թթ. հայաստանյան մամուլը հաճախ է անդրադարձել հայերենի, նաև նրա ու երկրի մյուս լեզուների գործառության հարցերին: Այս խնդիրներին անդրադարձել են նաև կառավարական նիստերի ընթացքում, որոնցում ամենակարևորը, անշուշտ, հայերենի՝ որպես պետական լեզվի հռչակման պատմական փաստն էր՝ իր բոլոր դրական հետևանքներով: Դ. Գյուրջինյանը ներկայացրեց մամուլում և խորհրդարանական ու կառավարական նիստերում այս առիթով եղած քննարկումները, հայերենը պետական լեզու ճանաչելու համար գործադրված լուրջ ջանքերը:

Գիտաժողովի չորրորդ նիստի վերջին զեկույցը՝ «Հայաստանի Հանրապետության խորհրդանիշների համակարգը և նրա սակրալ իմաստը» նվիրված էր մինչ օրս մեր հասարակայնության կողմից քննարկվող և հաճախ էլ իրարամերժ գնահատականների արժանացող Առաջին Հանրապետության խորհրդանիշերի պատմական ակունքների բացահայտմանը: Այս հետաքրքրական թեման բավականին խորությամբ ուսումնասիրած բանասիրական գիտությունների թեկնածու **Հայկազուն Ս. Ավրոյանը** մատնանշեց այն փաստը, որ սովորաբար, պետության ատրիբուտները չեն բացատրվում, մեկնաբանվում, ուստի չեն իմաստավորվում ըստ էության: Մինչդեռ այդ իմաստները խորն են և ունեն պատմական լուրջ արմատներ ու հիմնավորումներ: Ուստի՝ բանախօսը Հայաստանի Հանրապետության խորհրդանիշների համակարգի քննությունն իրականացրեց ոչ միայն նոր ժամանակներից, այլև միջնադարից մնացած ժառանգության համակողմանի ուսումնասիրության հիման վրա:

Գիտաժողովի վերջին՝ հինգերորդ նիստը, որը հազեցած էր ոչ միայն հետաքրքիր զեկույցումներով, այլև բանավեճերով ու քննարկումներով, տեղի ունեցավ հունիսի 1-ին ու տևեց մինչև ուշ երեկո: «**Հայաստանի հանրապետության անկումը և նրա պատմության դասերը**» խորագիրը կրող այդ նիստում ամենասպասվածը երկար տարիներ Կարսի անկման պատմությամբ զբաղվող ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր **Վլադիմիր Ա. Հարությունյանի** զեկույցն էր: Նրա «Կարսի հանձնումը. գիմնորական դավադրության վարկածը» զեկույցի վերնագիրը ներկաներին հուշում էր, որ հեղինակը լուրջ բացահայտումներ է անելու և նրանք չախալվեցին: Իր ծավալուն ելույթի մեջ Վլադիմիր Ա. Հարությունյանը բավականին հետաքրքիր ենթադրույթ-



յուն արեց, որ 1920 թ. Մայիսյան խռովություններից հետո բոլշևիկների և Կարսի ուղղությամբ գործող հայկական բանակի հրամկազմի որոշ առանցքային դեմքերի միջև եղել է պայմանավորվածություն առ այն, որ վերջիններս ապահովում են, որպեսզի իրենց ենթակա գորքը չխոչընդոտի թուրքերի առաջխաղացմանը, փոխարենը՝ բոլշևիկյան կողմը Հայաստանի Հանրապետության տապալումից հետո երաշխավորում է նրանց անվտանգությունն ու որոշ պաշտոններ նոր իշխանության օրոք: Մեկ առ մեկ բացահայտելով դավադրության մեջ ներքաշված սպաների շրջանակը և թուրք-հայկական պատերազմի ընթացքում նրա ձեռնարկած խափանարարական քայլերը, հեղինակը առարկայական փաստերով ցույց տվեց որ ի տարբերություն Հայաստանի խորհրդայնացումից հետո Ռյազանի համակենտրոնացման ճամբար պարտված իրենց ծառայակիցների, նրանք անմիջապես ղեկավար պաշտոններ են ստացել Խորհրդային Հայաստանի Կարմիր բանակում և անգամ մասնակցել են Վրաստանը խորհրդայնացնելու և 1921 թվականի Փետրվարյան ապստամբությունը ճնշելու նպատակ ունեցող ռազմական գործողություններին<sup>1</sup>:

Արդի եվրոպական պատմագիտության վերջին ձեռքբերումների վրա էր հիմնված **Սմբատ Խ. Հովհաննիսյանի** «Հայաստանի Հանրապետության մասին հիշողության քաղաքականությունը Խորհրդային Հայաստանում և անկախ Հայաստանում. հայոց պատմության դպրոցական դասագիրքն իբրև «հիշողության տեղանք»» գեկույցը: Նա նշեց, որ յուրաքանչյուր հանրույթի (նաև պետության) պատմական հիշողության մասին գոյություն ունեցող բազմաթիվ սկզբնաղբյուրների մեջ առանձնանում է դպրոցում դասավանդվող պատմության առարկան, որը կոլեկտիվ հիշողության, հետևաբար՝ ինքնության բազմաթիվ բաղադրիչների բովանդակումից գատ՝ աչքի է ընկնում իր նպատակաուղղվածությամբ: Դրա միջոցով տիրապետող վարչակարգը կամ պետությունը միտված է իրագործելու և լեգիտիմացնելու իր գերիշխանությունը: Այստեղից էլ դասագրքի՝ քաղաքական տրամասույթների համատեքստում քննարկելու կարևորությունը: Հայոց պատմության խորհրդային վերջին դասագրքի և անկախ Հայաստանում 1991-ից հետո լույս տեսած առաջին դասագրքի համեմատական քննության միջոցով հեղինակը ցույց տվեց, որ 1918-1921 թթ. Հայոց պատմության գնահատման առումով այդ ընթացքում իրականացվել են ոչ թե հայեցակարգային փոփոխություններ, այլ սոսկ քաղաքական դրամայի հակադիր բևեռներին տրվող գնահատականների փոխատեղումներ:

Ֆիզիկոս **Արծրուն Ա. Պեպանյանի** ներկայացրած գեկույցը վերաբերում էր 1918-1920 թթ. ընթացքում ժողովուրդ-քաղաքական ընտրախավ հարաբերությունների հիմնահարցին: Դա ոչ թե նեղ մասնագետի, այլ մտահոգ քաղաքացու ուսումնասիրություն էր: Նրա կարծիքով՝ Առաջին Հանրապետության պատմության քննությունը ցույց է տալիս, որ կային մի քանի հազար նվիրյալ հայորդիներ, որ հանուն երկրի գոյության պատրաստ էին զրկանքներ կրելու ու մահվան գնալու, բայց մյուս կողմից՝ կային նաև

<sup>1</sup> Քանի որ ներկա համառոտ լրատվության մեջ հնարավոր չէ ներկայացնել 1920 թվականի աշնանը Կարսում կազմակերպած զինվորական դավադրության մանրամասները, ընթերցողներին խորհուրդ ենք տալիս սպասել գիտաժողովի նյութերի հրապարակմանը:

հարյուր հազարավոր անտարբեր մարդիկ: Իսկ մարդկանց մեկ այլ հատված էլ զբաղված էր վնասարարությամբ: Դա էր մեր երկրին բաժին ընկած ողբերգության իրական պատճառը՝ ժողովրդի հիմնական զանգվածը պատրաստ չէր կրելու անկախության ծանր բեռը:

Գրականագետ **Ժենյա Ա. Քալանթարյանը** ներկայացավ «1918–1921 թթ. Հայոց պատմության գեղարվեստական արձագանքը ակնառես գրողների ստեղծագործություններում» խորագրով զեկուցմամբ: Ժ. Քալանթարյանը ներկայացրեց Առաջին Հանրապետության պատմության գեղարվեստական լայն արձագանքը հայ գրականության մեջ, ինչը փաստերի ու նրանց մեկնաբանությունների համեմատության հնարավորություն է տալիս: Գրականագետն այդ համեմատություններն անելու և մատուցելու նպատակահարմարությունը տեսնում է դեպքերի ակնառես, մասնակից գրողների ստեղծագործությունների վերլուծման մեջ:

Բանասիրական գիտությունների թեկնածու **Սվետլանա Բ. Թումանյանի** զեկուցման խորագիրն էր «Հայաստանի Հանրապետությունը ամերիկացի գրող Էլջին Գրոսբլոուսի «Արարատ» վեպում»: Որպես նախաբան՝ հեղինակը ներկայացրեց վեպի ուշագրավ սյուժեն, նրա հերոսների կապը տվյալ դարաշրջանի իրադարձությունների հետ, կատարվեցին պատմական ու հոգեբանական հետաքրքիր վերլուծություններ, համադրվեցին 1918–1920 թթ. հետ կապված որոշակի փաստերի դրսևորումները՝ պատմության և գրականության հարթակներում:

Գիտաժողովն ավարտվեց **կլոր սեղանի** միջոցով՝ «Հայաստանի Հանրապետության ձևավորումը և անկումը համաեվրոպական և տարածաշրջանային գործընթացների համատեքստում» թեմայի քննարկումով: Առաջին Հանրապետության պատմությունը դիտարկելով որպես համաշխարհային պատմության բաղկացուցիչ մաս՝ առաջադրվեցին ու քննարկվեցին հետևյալ զույգ հարցերը՝

ա) արդյո՞ք պատմական անհրաժեշտություն էր ՀՀ ձևավորումը,

բ) արդյո՞ք անխուսափելի էր նրա անկումը:

Նշված հարցերի քննարկումը տեղի ունեցավ՝ ներկա իրականության հետ զուգահեռներ անցկացնելու և համեմատական վերլուծություններ կատարելու միջոցով: Հատկանշվեց այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության ձևավորման համար խթան եղավ 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումը և Ռուսաստանի փաստացի փլուզումը, ինչը դիտարկվեց իբրև մայրցամաքային կայսրություններին բնորոշ կրկնվող օրինաչափություն: Միաժամանակ հստակորեն ցույց տրվեց, որ կայսրության նոր «հողահավաքի» հետևանքն էր Հայաստանի Հանրապետության անկումը: Դրա հիմքում ընկած էր 19-րդ դարին բնորոշ եվրոպական հավասարակշռության քաղաքական սկզբունքի տեղափոխումը մեր տարածաշրջան, ինչն անխուսափելի էր դարձնում ոչ միայն Ռուսաստանյան և Օսմանյան կայսրությունների փլուզումը, այլև նրանց նորացված կերպավորումների ձևավորումը: Ցույց տրվեց նման աշխարհաքաղաքական վերադասավորման կապը Մեծ Բրիտանիայի տարածաշրջանային քաղաքականության հետ: Մասնավորապես՝ մեկ շղթայի մեջ դիտվեց 1919 թվականին արձանագրված առանցքային իրադարձությունների շղթան՝ գեներալ Մուսթաֆա Բենալի

փախուստը Անատոլիա, բրիտանական զորքերի դուրսբերումը Անդրկովկասից, Հայաստանի Հանրապետության ռազմական թիկունքն ապահովող գեներալ Ա. Դենիկինի 1919 թվականի ամռան տպավորիչ հաղթանակների անսպասելի փոխակերպումը աշնանային պարտությունների և այլն:

Ուրեմն՝ նոր կամ՝ բոլշևիկյան Ռուսաստանի վերադարձը և նոր կամ՝ քեմալական Թուրքիայի ձևավորումը օբյեկտիվորեն ապահովում էր այն հավասարակշռությունը, որին ձգտում էր «ծովերի թագուհին»: Ուստի անկախ նրա քողարկված ներգրավվածության մասին վկայող փաստերի հավաստիությունից, մենք գործ ունեինք մի պրոցեսի հետ, որում պետք է գոհաբերվեին հայերի, հույների, քրդերի և այդ հավասարակշռության ձևավորման ճանապարհին հայտնված այլ ժողովուրդների շահերը:

Սակայն, բրիտանական պրագմատիզմի հաղթանակը տարածաշրջանային դրամայի նոր հանգրվանի սկիզբն էր միայն, քանի որ աշխարհաքաղաքական ազդակների բախման ավանդական սխեմաներին 20-րդ դարում աստիճանաբար փոխարինելու էր գալիս գլոբալ քաղաքականությունը, որը ԽՍՀՄ փլուզումից հետո դնելով Նոր աշխարհակարգի հիմքերը՝ վերախաղարկում է մեկ դար առաջ տեղի ունեցածը:

Ուստի հասնելով մինչև մեր օրերը՝ գիտաժողով-քննարկումի մասնակիցները ներկայացրեցին գիտական հիմք ունեցող կոնկրետ խորհրդատվություններ՝ ի նկատի ունենալով ապագայում անխուսափելի դարձող՝ տարածաշրջանային դրամայի կրկնության հավանականությունը:

Դրանցից հատկապես կարևոր էին՝

- 1917-ին տեղի ունեցած Ռուսաստանի ժամանակավոր փլուզման արդյունքում 1918 -ին մեր տարածաշրջանում Թուրքիայի գործի դրած համաթուրանական էքսպանսիայի խորքային զսպանակների բացահայտումը՝ ի նկատի ունենալով դրա կրկնության՝ ոչ միայն տեսական, այլև գործնական հնարավորությունները,

- Մայրաքաղաք Երևանի մշակութային հարացույցի ձևավորման թամայանական տեսլականի և դրա հետագա ձևախեղումների ցուցադրումն ու ներկայացումը՝ ի տես ներկա սերնդի,

- 1919 թվականի երկրորդ կեսից սկսված ՀՀ աշխարհաքաղաքական կացության վատթարացման պատճառների բացահայտումը, որոնք մինչ օրս նրբորեն քողարկվում են Արևմուտք - Ռուսաստան դիմակայության մասին երկու պարզունակ ու հավասարապես գաղափարախոսականացված մտակաղապարների միջոցով: Դրանք որպես 1918-1920 թթ. պատմության վերաբերյալ գերտերությունների քարոզչական խոհանոցներում հորինված պատկերացումների համակարգեր, հավասարապես աղձատում են պատմական իրականությունը մի կողմից՝ 1920 թվականի մայիսին մեր «կորցրած հնարավորության» մասին խորհրդային հայտնի հեքիաթի տարածման, իսկ մյուս կողմից՝ եվրոպական հավասարակշռության ճարտարապետների հովանավորած՝ բոլշևիկա-քեմալական գործարքն իբրև ռուս-թուրքական դաշինք ներկայացնելու միջոցով:

- Եվ վերջապես՝ գիտաժողով-քննարկման լուրջ ձեռքբերումն էր Կարսի անկման մասին մինչ օրս շրջանառվող քաղաքականացված մեկնաբանությունների մասնակի հերքումը և Կարսի հանձնման կոնկրետ մեխանիզմի՝

զինվորական դավադրության և նրա մասնակիցների շրջանակի բացահայտումն ու համեմատումը՝ մեր առջև կանգնած ներկա մարտահրավերների հետ:

Այսպիսով, 2018 թվականի մայիսի 31-ին և հունիսի 1-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանում կազմակերպված՝ «Հայաստանի Հանրապետության պատմության դասերը 1918–1920 թթ.» գիտաժողով-քննարկումը գիտական բազմաշերտ ուսումնասիրությունների և տեսակետների պարզ համադրություն չէր, այլ մեկ ամբողջ դարի հեռավորությունից Հայաստանի Հանրապետությանն ուղղված գնահատողական հայացք: Նման տարողության միջոցառումը ներկա ժամանակից դեպի անցյալ թափանցելու և միաժամանակ՝ մոտ ապագային պատգամ ուղղելու հաջողված փորձ էր: Սրանով մեր ազգային կամքի ու գիտական ոգու յուրօրինակ երախտագիտությունը մատուցվեց Հայաստանի Հանրապետությունը կերտած անձնվեր անհատականություններին և նրանց մեծ գործին, ինչպես նաև ապագայի այն անձնվերներին, որոնց փոխանցվելու է Հայոց մեծագույն ազգային արժեքը՝ Հայաստանի անկախությունն ու ազատությունը:

Սիրանուշ Գ. Հովհաննիսյան  
*Բանաս. գիյր. թեկն.*

**Սիրանուշ Գ. Հովհաննիսյան** – հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ընդհանուր լեզվաբանության և լեզվափոխության բնագավառները: Զբաղվում է հոգեբուժական լեզվաբանության, լեզվի անդրանցայնության (տրանսցենդենցիա), լեզվանշանագիտության հարցերով: Մեկ մենագրության, շուրջ 20 գիտական հոդվածի ու զեկուցումների հեղինակ է:

## Summary

### “LESSONS OF HISTORY OF THE ARMENIAN REPUBLIC IN 1918–1920”

Conference–dispute at the American University of Armenia  
(May 31 – June 1, 2018)

Siranush G. Hovhannisyan

**Key words** – conference–dispute, lessons of history, world history, scientific discussions, question–reply, historical context.

On May 31 and June 1 at the initiative of “Vem” Pan–Armenian journal’s editorial staff in Paramaz Avetisyan’s Building of American University of Armenia namely in Alec and Mari Manoogians’ Hall a conference–discussion was held entitled “The Historical Lessons of Armenian Republic of 1918–1920 in the Context of the Generations’ Memories and Modern Challenges” dedicated to the 100 an–

niversary of Armenian First Republic. The event was held in the presence of numerous guests, in the atmosphere of really scientific discussions and exchange of views by different professional fields' representatives. Scientific productivity was also promoted by the structure of the event: every stage of report was followed by the stage of question-reply due to which certain details of the themes were aroused. The conference ended with the presentation of books and round table discussions in the framework of which the main theme, namely, "The Formation of Armenian First Republic and its Decline under the European and Regional Light" was offered.

ԼՐԱՏՈՒՐ

Резюме

### «УРОКИ ИСТОРИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ 1918–1920 гг.»

Конференция–обсуждение в Американском университете  
Армении (31 мая – 1 июня 2018 г.)

Сирануш Г. Оганесян

**Ключевые слова** – конференция–обсуждение, уроки истории, мировая история, научные обсуждения, вопросы и ответы, исторический контекст.

По инициативе редакции журнала «Вем» 31-го мая и 1-го июня 2018 г. в зале «Алек и Мари Манукян» Американского университета Армении прошла конференция–обсуждение «Уроки истории Республики Армения 1918–1920 гг.», посвященная столетию образования Первой Республики Армения. Мероприятие прошло в присутствии многочисленных гостей, в атмосфере серьезных научных обсуждений и обмена мнениями между представителями разных отраслей гуманитарного знания. Научной продуктивности способствовала также структура мероприятия: в конце каждого заседания было отведено время для вопросов и ответов, благодаря которым разъяснялись некоторые из рассмотренных тем. Конференция закончилась круглым столом, на котором в качестве главной темы для обсуждений было предложено «Формирование и падение Республики Армения в контексте европейских и региональных процессов».

ՎԵՄ համահայկական հանդես  
Ժ (ԺԶ) քաղաք, թիվ 2 (62), ամիսը–հունիս, 2018